ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սերգեյ Վլադիկի Ավանեսյան
ուսումնական գծով փոխտնօրեն
Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց
SS դասախոս
Գորիսի պետական քոլեջ
Հերմինե Սերյոժայի Ալավերդյան
մանկավարժության դասախոս
Գորիսի պետական համալսարան
աշխարհագրության ուսուցիչ
Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Անոտացիա. Որակի ապահովումը դարձել է պարտադիր գործընթաց այն երկրներում, որոնք ստորագրել են տարբեր միջազգային հռչակագրեր, և եվրոպական գրեթե բոլոր երկրներն արձագանքել են այդ պայմանին՝ ստեղծելով և ներդնելով նման համակարգեր:
Կարևոր ոլորտներից մեկը պետք է լինի մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկման մանկավարժական համակարգի մշակումն ու ներդրումը:

Հանգուցային բառեր. կրթության որակ, որակի չափանիշներ, ուսումնական հաստատություն:

Աշխարհում տարեցտարի աճում է մասնագիտական կրթության որակի ապահովման ներքին և արտաքին համակարգեր ստեղծելու պահանջը: Այս միտումը մասնագիտական ուսումնական հաստատությունների ավելացող քանակի և դրանց հատկացվող պետական, հանրային ու մասնավոր ներդրումների արագ աճի համար կարելի է համարել որպես դրական արձագանք:

Տարբեր միջազգային հռչակագրեր ստորագրած երկրներում որակի ապահովումը պարտադիր գործընթաց է դարձել, և Եվրոպայի գրեթե բոլոր երկրները արձագանքել են այս պայմանին՝ հիմնելով և կիրառելով այդպիսի համակարգեր:

Կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման տեսության և պրակտիկայի վերլուծությամբ փաստվել են, որ առկա են հակասություններ և անհամապատասխանություններ տեսության և պրակտիկայի, ինչպես նաև պետության սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների միջև: Կրթության որակի հիմնախնդրի լուծումը սոցիալ-տնտեսական նոր պայմաններում չի հաջողվում կամ դժվարանում է այդ հակասությունների և անհամապատասխանությունների պատճառով: Բացի այդ, դեռևս չեն իրականացվել կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկողության հիմնարար գիտական հետազոտություններ, մշակվել գործընթացի կառավարման տեխնոլոգիական համակարգեր:

Կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկողության տեխնոլոգիական համակարգերի գիտական որոնումների գործնական առավել արդյունավետ ուղղությունը, մեր կարծիքով, ուսումնական հաստատության կառավարման, կրթության բովանդակության ու կազմակերպման կատարելագործումն է և, անտարակույս, ուսուցման նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը: Ժամանակակից մանկավարժական հետազոտությունների նյութերում ձևակերպված են մասնագիտական կրթության համակարգի զարգացման գերակա ուղղությունները և հիմնախնդիրները: Առավել կարևոր ուղղություններից պետք է դառնա մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման և վերահսկողության մանկավարժական համակարգերի մշակումն ու ներդրումը, ինչը առավել արդիական է կապված շրջանավարտների՝ թողարկվող մասնագետների պետական կրթական չափորոշիչների և աշխատաշուկայի պահանջներին, գիտության, մշակույթի, տեխնիկայի, տեխնոլոգիայի առաջընթացին համապատասխան կրթության մակարդակի երաշխիքների ապահովման ձգտումների հետ:

Ցանկացած ուսումնական հաստատության համար, այդ համար որակի ապահովման համակարգը միջոց է կրթության որակի ոլորտում հաստատության քաղաքականության և նպատակների մշակման, իրականացման և զարգացման համար:

Հայաստանում գործող բարձրագույն ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգը կարելի է ասել մշակվել և ներդրվել է 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված փաստաթղթից հետո: Միջին մասնագիտական կրթական համակարգում կրթության որակի ապահովման համակարգի ներդնումը սկսվել է հարաբերականորեն վերջերս՝ 2017 թվականին:

Որակի ապահովման գործունեությունը ուղղված է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ներքին և արտաքին շահակիցների կարիքների և պահանջների ուսումնասիրմանը և իրականացմանը՝ որակյալ կրթություն ապահովելու համար:

Որակի ապահովման համակարգի զարգացման մյուս կարևոր գործոնը մշակութային տարբերությունները հաշվի առնելն է, ինչը վճռորոշ գործոն է որակի ապահովման մոդելի ընտրության հարցում, քանի որ այնպիսի ասպեկտներ, ինչպիսին են ազգային նպատակները, մասնագիտական կրթության նպատակները և իրականացման ձևերը, պետք է հաշվի առնել:

Մյուս կողմից հետխորհրդային համատեքստում, որտեղ տարբերությունների պատճառ են հանդիսանում տարաբնույթ համոզմունքները, իրական պատասխանատուների գիտելիքի մակարդակի փոփոխությունը, որակի ապահովման առկա վիճակը և մասնագիտական կրթության որդեգրած նպատակները, որակի ապահովման համակարգը պետք է խթանի կառուցվածքային և վարքագծի փոփոխությունները՝ սահմանելով որպես առաջնային նպատակ, եթե հարցը վերաբերում է կրթական ծառայությունների ճանաչմանն ու միջազգայնացմանը:

Հայաստանում «կրթության որակ» հասկացության և որակի հավաստման նոր համակարգի ձևավորման քննարկումները 2000 թվականից սկսվել են Եվրախորհրդի «Որակի հավաստման իրավական շրջանակը Հարավային Կովկասի երկրներում.

Հայաստան, Վրաստան և Ադրբեջան» ծրագրից: Նշված ծրագրի շրջանակում մշակված ազգային զեկույցներում և 3 երկրների կրթության նախարարների համատեղ հռչակագրերում շեշտվում էր որակի հավաստման նոր համակարգի ձևավորման անհրաժեշտությունը, մասնագիտական կրթական հաստատությունների կառավարման ժողովրդավարացումը (ժողովրդավարական սկզբունքների ներդրումը), ակադեմիական ազատությունները և ուսանողների մասնակցությունը որակի հավաստման գործընթացներին:

Որակը որպես նպատակին համապատասխանության սկզբունք ընդգծում է համընդհանուր ընդունված չափանիշներին համապատասխանության կամ համապատասխանելու անհրաժեշտությունը: Ուսումնական հաստատության որակը բնորոշվում է որպես ձևակերպված առաքելությանը և սահմանված նպատակներին հասնելու գաղափար, ընդունելով, որ դրանք արտացոլում են մուտի բոլոր շահակիցների պահանջները:

Որակը միջին մասնագիտական կրթական համակարգում կամ ակադեմիական որակը - բազմաչափ, բազմամակարդակ և դինամիկ հասկացություն է, որն առնչվում է կրթական մոդելի համատեքստային պարամետրերին, ինստիտուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև հատուկ ստանդարտներին՝ տվյալ համակարգի, ծրագրի կամ մասնագիտական ուղղության շրջանակներում: Կախված մոտեցումից և օգտագործման նպատակից՝ տարբերվում են որակի տարբեր սահմանումներ. որակը՝ որպես գերազանցություն, որակը՝ որպես համապատասխանություն սահմանված նպատակին, որակը՝ որպես բարելավում և այլն:

Որակի ապահովում (quality assurance) – միջին մասնագիտական կրթական համակարգի, կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, երաշխավորման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց է:

Որակի աուդիտ (quality audit) – որակի գնահատման գործընթաց, որի միջոցով իրավասու արտաքին մարմինն ապահովում է (ստուգում է)՝

ա) կրթական ծրագրերի որակի ապահովման ընթացակարգերի կամ՝

բ) ողջ կրթական համակարգի որակի ընդհանուր ապահովման (ներքին և արտաքին) ընթացակարգերի առկայությունը, համարժեքությունը սահմանված նպատակներին և դրանց փաստական իրականացումը:

Որակի ապահովման եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ (European Standards and Guidelines for Quality Assurance) – Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված փաստաթուղթ (Բերգենի կոմյունիկե)՝ Որակի ապահովման եվրոպական չափորոշիչներն ու ուղենիշները, որը ներառում է եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ՝ որակի ներքին ու արտաքին ապահովման և որակի ապահովման եվրոպական գործակալությունների համար: ՈԱԵՉՈՒ-ը կառավարությունների, որակի ապահովման գործակալությունների և ուսումնական հաստատությունների համար Որակի ապահովման ազգային համակարգեր մշակելու խորհրդատվություն և օժանդակություն ստանալու աղբյուր է հանդիսանում: ՈԱԵՉՈՒ-ը զգալի չափով համադրելի է Որակի ապահովման գործակալությունների միջազգային ուղենիշների հետ, ուստի դրանք կիրառելի է դարձնում ազգային, ինչպես նաև միջազգային մակարդակներում: Չնայած ՈԱԵՉՈՒ-ը պարտադիր բնույթ չի կրում, սակայն տրամադրում է միասնական կողմնորոշիչ շրջանակ, որն ուղղված է որակավորումների միջազգային ճանաչմանը: Այսօր ՈԱԵՉՈՒ-ի կատարումն անհրաժեշտ պայման է դարձել նաև ՈԱԳՑ-ին (ENQA) անդամակցելու և Որակի ապահովման գործակալությունների եվրոպական գրանցամատյանում (ՈԱԳԵԳ) գրանցվելու համար:

Որակի ներքին ապահովման համակարգ (internal quality assurance system) – կառավարման կառուցվածքավորված և փաստաթղթավորված համակարգ, որը նկարագրում և իրագործում է մուտի որակի ապահովման քաղաքականությունը, խնդիրներն ու սկզբունքները, կազմակերպական լիազորություններն ու պատասխանատվությունները և իրականացման պլանը:

Որակի բարելավում (quality improvement) - որակի պլանավորման և որակի մոնիթորինգի միջոցով կառավարվող որակի բարձրացման շարունակական գործընթաց:

Որակի գնահատում (որակի փորձաքննություն) (quality assessment, quality review) – մուտի և կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման (ուսումնասիրման, չափման, արժևորման) գործընթաց:

Որակի կառավարում (quality management) - կրթության որակն ապահովելու նպատակով մուտի կամ կրթական համակարգի մակարդակով պարբերաբար

իրականացվող միջոցառումների համակցություն՝ որակի բարելավման շեշտադրմամբ:

Որակի մշակույթ (quality culture) - որակի համընդունելի և ինտեգրացված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է մուհի կազմակերպական մշակույթին կամ կառավարման համակարգին:

Որակի պլանավորում (quality planning) – գործողություններ, որոնք խնդիրներ և պահանջներ են սահմանում որակի համակարգի առանձին տարրերի կիրառման համար:

Որակի վերահսկողություն (quality control) – որակի ուսումնասիրության գործընթաց, որը նպատակաուղղված է մուհի կամ կրթական ծրագրի որակի ներքին կամ արտաքին չափմանը:

Որակի քաղաքականություն (quality policy) – որակի ապահովման ասպարեզում ընդհանուր մտադրություններն ու ուղղությունները, որոնք պաշտոնապես ներկայացվում են մուհի ղեկավարության կողմից [3-5]:

Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների՝ որակի ներքին ապահովման համակարգերը պետք է պարունակեն հետևյալ հիմնական կառուցամասերը՝

1. ***Որակի ապահովման ռազմավարություն և քաղաքականություն ու դրա հետ կապված ընթացակարգեր և չափորոշիչներ***

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա քաղաքականություն և համակցված ընթացակարգեր՝ իր ծրագրերի ու որակավորումների որակի և ստանդարտներին համապատասխանության ապահովման համար: Ուսումնական հաստատությունը պետք է ստանձնի պարտավորություն որակի մշակույթի զարգացման վերաբերյալ, ինչն ընդգծում է Որակի և Որակի ապահովման կարևորությունը ուսումնական հաստատության գործունեության բոլոր ոլորտներում: Դրան հասնելու համար ուսումնական հաստատությունը պետք է մշակի ու իրականացնի որակի շարունակական բարելավման ռազմավարություն: Քաղաքականությունը, ռազմավարությունը և ընթացակարգերը պետք է պաշտոնական կարգավիճակ ունենան և հանրայնորեն մատչելի լինեն: Դրանք պետք է ներառեն նաև ուսանողների և այլ շահակիցների դերի ձևակերպումը:

2. ***Ծրագրերի և որակավորումների հաստատման, պարբերաբար վերանայման և մոնիթորինգի հաստատված մեխանիզմներ***

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա պաշտոնական մեխանիզմներ՝ իր կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման համար:

3. ***Ուսանողների գնահատման հետևողականորեն կիրառվող և հրապարակված չափանիշներ, կանոնակարգեր և ընթացակարգեր***

Ուսանողները պետք է գնահատվեն հրապարակված և հետևողականորեն կիրառվող չափանիշների, կանոնակարգերի և ընթացակարգերի միջոցով:

4. *Դասախոսների կարողությունների գնահատման թափանցիկ մեխանիզմներ և չափանիշներ*

Ուսումնական հաստատությունը պետք է միջոցներ ունենա հավաստիանալու, որ դասավանդման գործընթացում ներգրավված է որակյալ և կարող դասախոսական կազմ: Այդ միջոցները պետք է հասանելի լինեն արտաքին փորձաքննություն իրականացնող մարմիններին և պարզաբանվեն նրանց զեկուցումներում:

5. *Կրթական ծրագրերի պահանջներին համարժեք ուսումնական և այլ աջակցող ռեսուրսներ*

Ուսումնական հաստատությունը պետք է երաշխավորի, որ ուսանողների ուսումնառության օժանդակության առկա ռեսուրսները համարժեք են և համապատասխան առաջարկվող յուրաքանչյուր ծրագրի կարիքներին:

6. *Ուսումնական գործընթացի արդյունավետ կառավարման համար պատշաճ տեղեկատվության հավաքում, վերլուծում և օգտագործում*

Ուսումնական հաստատությունը պետք է երաշխավորի, որ հավաքում, վերլուծում և օգտագործում է ստույգ տեղեկատվություն իր կրթական ծրագրերի և գործունեության այլ ձևերի արդյունավետ կառավարման համար:

7. *Ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ մշտապես նորացվող, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվության պարբերաբար հրապարակում*

Ուսումնական հաստատությունը պետք է կանոնավոր կերպով հրապարակի արդիական, անշահախնդիր և օբյեկտիվ քանակական և որակական տեղեկատվություն իր կողմից առաջարկվող ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին[1]:

Եվրոպական ENQA ստանդարտի համապատասխան ուսումնական հաստատությունը պետք է ունենան քաղաքականություն և համակցված ընթացակարգեր՝ իրենց ծրագրերի ու որակավորումների որակի և ստանդարտներին համապա-տասխանության ապահովման համար: Ուսումնական հաստատությունները պետք է ստանձնեն նաև պարտավորվածություն որակի մշակույթի զարգացման վերաբերյալ, ինչն ընդծում է որակի և որակի ապահովման

կարևորությունը նրանց աշխատանքում: Դրան հասնելու համար մուհերը պետք է զարգացնեն և իրականացնեն որակի շարունակական բարձրացման ռազմավարություն: Քաղաքականությունը, ռազմավարությունը և ընթացակարգերը պետք է պաշտոնական կարգավիճակ ունենան և հանրայնորեն մատչելի լինեն: Դրանք պետք է ներառեն նաև ուսանողների և այլ շահակիցների դերի ձևակերպումը:

Ուսումնական հաստատության որակի ապահովման ընթացակարգերը պետք է կազմվեն՝ հետամտելով մասնագիտական կրթության որակի բարելավումն ու պահպանումը: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է արտացոլի ուսումնական հաստատության առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված լինի թե՛ կառավարման ռազմավարական պլանի և թե՛ իրականացվող գործունեության հետ: Որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է սահմանի որակի պարզ և չափելի խնդիրներ կազմակերպության տարբեր գործառույթների և մակարդակների համար: Գործընթացները պետք է առաքելության, արժեքների և տարբեր ծրագրերի, ձերքբերումների վերանայման, վերլուծության և զարգացման հնարավորություն տան:

Որակի ապահովման քաղաքականությունը պետք է տարածվի մուհերի գործառույթների և գործողությունների այն բոլոր ասպեկտների վրա, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափորոշիչների պահպանման և որակի ապահովման վրա, ինչպիսիք են, օրինակ, դասավանդումը, հետազոտական աշխատանքները, ուսումնառությանն աջակցելու ծառայությունները, կառույցները, կացարանները, կահավորումն ու սարքավորումները, կառավարումը, համայնքային ծառայությունները և համագործակցությունը արդյունաբերության հետ:

Որակի ապահովման քաղաքականությունը պետք է կենտրոնանա հայտարարված առաքելությունից բխող նպատակների կատարման ընթացքի որակի վրա: Կատարողական ցուցիչների վերանայումն ըստ թիրախների այսպիսի քաղաքականության բաղկացուցիչ մասն է: Ուսանողների կողմից ակնկալվող կրթական արդյունքներին հասնելու աստիճանը պետք է քննարկման հիմնական առարկան լինի: Կրթական ծրագրի հետագա բարելավումը նույնպես պետք է քաղաքականության հիմնական խնդիրը լինի:

Որակի ապահովման քաղաքականություն մշակելու և ինստիտուցիոնալ որակը պահպանելու ու բարելավելու պատասխանատվությունը, որպես կանոն, թողնվում է

ուսումնական հաստատության կառավարման մարմնին: Եթե կառավարման մարմինը որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակման ու իրականացման պատասխանատվությունը վերահասցեագրում է որևէ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի, ապա դա անհրաժեշտ է հստակ սահմանել: Այդ մարմինը կամ անձը որակին առնչվող խնդիրները պետք է անմիջականորեն զեկուցի կառավարման մարմնին, ուստի պետք է պատշաճ տեղ զբաղեցնի հաստատության կազմակերպական կառուցվածքում, որպեսզի իրեն վերապահված գործառույթները կատարելու անհրաժեշտ լիազորություններ ունենա:

Որակի ապահովման քաղաքականությունը պետք է ապահովի արտաքին փորձագետների ներգրավումը որակի ապահովման քաղաքականության և գործընթացների վերանայման գործում: Արտաքին փորձագետների ընտրության և մասնակցության հարցում պետք է ապահովվի նաև էթիկական նորմերի պահպանումը: Փորձագետները պետք է նախապես հայտնեն անձնական, մասնագիտական, ակադեմիական կամ գործնական շահերի առկայության մասին, որոնք կարող են հակասել իրենց փորձագիտական պարտավորություններին: Փորձագետների անկախությունն ու գործընթացի թափանցիկությունը որոշիչ գործոններ են հաջողության հասնելու համար:

Որակի ապահովման քաղաքականության հաջող իրականացման համար մուհը պետք է հատկացնի անհրաժեշտ ռեսուրսներ:

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա որակի ապահովման գործընթացների ամբողջական նկարագրություն պարունակող Որակի ապահովման ձեռնարկ: Ձեռնարկը պետք է ներառի կազմակերպական գծապատկերը, որը ցուցադրում է որակի ապահովման պատասխանատվությունների բաշխումը և հաշվետվությունների ներկայացումը՝ ըստ ենթակառույցների: Որակի ապահովման գործընթացները պետք է արտացոլեն տվյալ ուսումնական հաստատության առանձնահատկությունները, ինչպես նաև հանրային կարիքների և աշխատաշուկայի հետ կապված յուրահատուկ խնդիրներն ու նպատակները: Որակի չափանիշները պետք է համահունչ լինեն մուհի խնդիրներին՝ ամբողջ կազմակերպության և մասնագիտության կրթական ծրագրի/ծրագրերի մակարդակում: Ընթացակարգերը պետք է ընդգրկուն, սակայն նշվածով չսահմանափակվելով:

Որակի ապահովման ընթացակարգերը պետք է վերստուգելի տվյալների տեսքով տրամադրեն կատարողականի վկայություններ առ այն, որ որակի ապահովման օբյեկտները պատշաճ կերպով դիտարկվել են: Հետևաբար, որակի ապահովման օբյեկտները պետք է հստակ սահմանվեն, ինստիտուցիոնալ կամ ծրագրային խնդիրներին համադրելի, ինչպես նաև պարզ և չափելի լինեն:

Փաստաթղթերում կատարողական տվյալների պարբերաբար արձանագրումը կարևոր նշանակություն ունի որակի արդյունավետ պահպանման և բարելավման համար:

Ընթացակարգերը պետք է ապահովեն որոշումների պաշտոնական, պարբերաբար և հետևողական կայացումը և իրականացման ընթացքը: Այս պահանջը բխում է որակի վերանայման արդյունքներով հայտնաբերված տվյալներին արդյունավետ կերպով արձագանքելու երաշխիքներ ձևավորելու անհրաժեշտությունից: Հիմնական պահանջներից մեկը որակի պահպանման և բարելավման գործողությունների պարբերաբար փաստաթղթավորումն է:

Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի որակի ապահովման այնպիսի ասպեկտների վրա, որոնք հեշտ չեն ենթարկվում քանակապես արտահայտելի մշտադիտարկման: Ուսումնական հաստատությունը պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն և ռազմավարություն՝ երաշխավորելու համար, որ այդ ասպեկտները որակի ապահովման ընթացակարգերով չեն շրջանցվել:

Որակի ապահովման ընթացակարգերը յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրի/ծառայության դեպքում պետք է կենտրոնանան

ծրագրի/ծառայության խնդիրների վրա,

ծրագրի/ծառայության՝ իր առջև դրված խնդիրներին համապատասխանությունը հաստատող փաստերի վրա,

թերությունները վերացնելու և բարելավումներ կատարելու գործընթացների արդյունավետության վրա:

Հաստատության որակի ներքին ապահովման համակարգի արդյունավետությունն ու հուսալիությունը երաշխավորելու համար այն պետք է պարբերաբար վերանայվի

արտաքին գնահատման համար լիազորված մարմնի կողմից: Արտաքին վերանայման չափանիշները հիմնվում են հետևյալ սկզբունքների վրա.

Արտաքին վերանայում իրականացնող մարմինը պետք է.

ունենա պաշտոնական կարգավիճակ,

առաջնորդվի կոնկրետ չափորոշիչներով,

ունենա համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսներ,

ունենա հստակ և բացահայտ նպատակներ և խնդիրներ արտահայտող առաքելություն,

լինի անկախ և ինքնուրույն,

ունենա որակի ներքին ապահովման ոլորտում հրապարակված քաղաքականություն և համապատասխան փաստաթղթեր (չափանիշներ ու գործընթացներ),

ունենա հաշվետվողականություն ապահովող մեխանիզմներ,

կատարի շրջափուլային վերանայումներ և փորձաքննություններ:

Հաստատություններն իրենց ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար պետք է մշակեն քաղաքականություն և դրան առնչվող ընթացակարգեր: Նրանք պետք է հետևողականորեն նպաստեն իրենց աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Այն ձեռք բերելու համար հաստատությունները պետք է զարգացնեն և իրագործեն որակի շարունակական ամրապնդման ռազմավարություն: Հաստատությունները պետք է նաև կարևորեն ուսանողների և այլ շահակիցների դերը[1]:

Ցանկացած ուսումնական հաստատության համար, այդ թվում նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատության համար որակի ապահովման համակարգը միջոց է կրթության որակի ոլորտում հաստատության քաղաքականության և նպատակների մշակման, իրականացման և զարգացման համար:

Հայաստանում գործող բարձրագույն ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգը կարելի է ասել մշակվել և ներդրվել է 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված փաստաթղթից հետո: Միջին մասնագիտական կրթական համակարգում կրթության որակի ապահովման համակարգի ներդնումը սկսվել է հարաբերականորեն վերջերս՝ 2017 թվականին:

Որակի ապահովման գործունեությունը ուղղված է միջին մասնագիտական ուսումնական հաստատության ներքին և արտաքին շահակիցների կարիքների և պահանջների ուսումնասիրմանը և իրականացմանը՝ որակյալ կրթություն ապահովելու համար:

Որակի ապահովման համակարգի զարգացման մյուս կարևոր գործոնը մշակութային տարբերությունները հաշվի առնելն է, ինչը վճռորոշ գործոն է որակի ապահովման մոդելի ընտրության հարցում, քանի որ այնպիսի ասպեկտներ, ինչպիսին են ազգային նպատակները, մասնագիտական կրթության նպատակները և իրականացման ձևերը, պետք է հաշվի առնել:

Մյուս կողմից հետխորհրդային համատեքստում, որտեղ տարբերությունների պատճառ են հանդիսանում տարաբնույթ համոզմունքները, իրական պատասխանատուների գիտելիքի մակարդակի փոփոխությունը, որակի ապահովման առկա վիճակը և մասնագիտական կրթության որդեգրած նպատակները, որակի ապահովման համակարգը պետք է խթանի կառուցվածքային և վարքագծի փոփոխությունները՝ սահմանելով որպես առաջնային նպատակ, եթե հարցը վերաբերում է կրթական ծառայությունների ճանաչմանն ու միջազգայնացմանը[7]:

Մասնագիտական կրթական հաստատություններում որակի ապահովման համակարգի մոդելը հիմնականում ունենում է ստորև ներկայացված տեսքը, որն իր մեջ ընդգրկում է ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային

կենտրոնի կողմից սահմանված բոլոր հիմնական պահանջները (նկ. 1.):

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՈԴԵԼ				
Մշտադիտարկման գործիքներ	Ուսանողների առաջադիմություն	Ուսանողների բացարձակ առաջադիմություն (ստուգարքային, քննական)	Գործատուներից և շրջանավարտներից հետադարձ կապ	Գիտահետազոտական (հետազոտական) գործունեություն
Գնահատման գործիքներ	Ուսանողների կողմից գնահատում	Ուսումնական պլանի գնահատում	Կրթական ծառայությունների գնահատում	Գիտահետազոտական (հետազոտական) գործունեության գնահատում
Հատուկ որակի ապահովման գործընթաց	Ուսանողների գնահատում	Անձնակազմի որակի ապահովում	Կառույցների (կառուցվածքային մասերի) որակի ապահովում	Ուսանողների աջակցության որակի ապահովում
Հատուկ որակի ապահովման գործիքներ	SWOT վերլուծություն	Դասավանդման ստուգում	Տեղեկատվական համակարգ	Որակի ապահովման ձեռնարկ
ԶԱՐԳԱՑՈՒՄ				

Գծապատկեր 1. Որակի ապահովման մոդել